5.Հանրային քննարկումների կազմակերպումը և իրականացումը ֆինանսավորվում է տվյալ տարվա Դրախտիկ համայնքի (այսուհետ համայնքի) բյուջեով նախատեսված հատկացումներից ,ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

6.Հանրային քննարկումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է ,եթե Դրախտիկ համայնքի ղեկավարի(այսուհետ համայնքի ղեկավարի) որոշմամբ չի սահմանվել առավել երկար ժամկետ:

II Հանրային քննարկումների իրականացման ընթացակարգը

7.Համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով ,ինչպես նաև այն վայրերում ,որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր բնակչի համար, առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար, ինչպես նաև հնարավորության դեպքում ՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակվում է հանրային քննարկումների հրավեր,որը պետք է պարունակի քննարկումների իրականացման տեսակի,վայրի,ժամի,ժամկետների,քննարկման թեմայի,ինչպես նաև հանրային քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունման վերջնաժամկետի (եթե նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) մասին տեղեկություններ:Ընդ որում ,դիմումների ընդունման վերջնաժամկետը չի կարող պակաս լինել,քան հանրային քննարկումների հրավերի հրապարակման պահից տաս օրը:

Համայնքի ղեկավարի որոշմամբ,հաշվի առնելով հարցի կարևորությունը , հանրային քննարկումների հրավերը կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվության միջոցներով և ժամանակակից հեռահաղորդակցման այլ միջոցներով:

8. Հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկումների հրավերը հրապարակելու հետ մեկտեղ համայնքի ավագանու նստավայրում,ինչպես նաև հնարավորության դեպքում համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակվում է իրավական ակտի նախագիծը,իրավական ակտի ընդունման